

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՀՍԵՆ ԱԼԻ ՀԵՅԴԱՐԻ

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ը.00.06 – «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թորոս Շահենի Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ջոյա Աղվանի Թադևոսյան

տնտեսագիտության թեկնածու
Նարեկ Համլետի Խուբլարյան

**Առաջադար
կազմակերպություն՝**

**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունիսի 05-ին, ժամը 15³⁰-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդի նիստում:


Հասցե՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի փ. 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. մայիսի 05-ին:

**008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Ա.Մ. Սուվարյան



ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արենախոսության թեմայի արդիականությունը: Հայ-իրանական տնտեսական հարաբերությունների հիմքը դրվել է նորանկախ Հայաստանի անկախության առաջին օրերից: Իրանի Իսլամական Հանրապետությունն (այսուհետ՝ ԻԻՀ) առաջիններից էր, որ ընդունեց հարևան Հայաստանի անկախությունը և սկսեց դիվանագիտական և տնտեսական հարաբերությունների զարգացումը:

Այդուհանդերձ հայ-իրանական ներդրումների վերաբերյալ ներկայիս վիճակագրական տվյալները ամենևին էլ ոգևորիչ չեն: Նախ և առաջ առհասարակ բացակայում է ԻԻՀ-ում ՀՀ-ի կողմից իրականացված ներդրումների մասին որևէ պաշտոնական վիճակագրություն, ինչը նշանակում է, որ կա՛մ այդպիսիք առկա չեն, կա՛մ իրականացվում են Իրանում բնակվող իրանցիների կամ իրանահայերի անունների ներքո՝ բազմաթիվ խնդիրներից խուսափելու համար: Իսկ ՀՀ-ում ԻԻՀ կողմից իրականացվող օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) վիճակագրությունը ցույց է տալիս, որ այդ ներդրումներն ունեցել են կամայական բնույթ, չունեն հստակ արտահայտված դինամիկա և կազմում են ՀՀ ընդհանուր ՕՈՒՆ-ի չնչին տոկոսը: Այս ամենը վկայում է այն մասին, որ ՀՀ-ն փոքր սպառողական շուկայի պատճառով առանձնապես գրավիչ չէ իրանցի ներդրողների համար:

ՀՀ ներդրումային դաշտի համակարգման հիմքը դրվեց 1995թ. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: Այնուհետև ընդունվեցին ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված այլ օրենքներ և իրավական ակտեր: Իսկ ԻԻՀ-ում առաջին հիմնավոր օրենքը ներդրումային պաշտպանության վերաբերյալ ընդունվեց 1965թ.՝ հետագայում մշտապես բարելավվելով:

Այս իրողությունն առկա էր մինչև 2015թ.: 2015թ. հունվարի 1-ից Հայաստանն ու Իրանը հայտնվեցին նոր տնտեսական իրողությունում՝ ՀՀ-ն անդամակցեց Եվրասիական տնտեսական միությանը՝ այսպիսով ներդրողների առաջ բացելով 180-միլիոնանոց սպառողական ներուժ ունեցող շուկայի դռները: Բացի այդ, 2015թ. աստիճանաբար նվազեցվեցին Իրանի նկատմամբ կիրառվող համաշխարհային պատժամիջոցները՝ այսպիսով նոր հնարավորություններ ստեղծելով տնտեսության զարգացման համար:

Այս ամենի հիման վրա նոր հորիզոններ են բացվում հայ-իրանական փոխադարձ ներդրումների զարգացման համար: Այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում հայ-իրանական ներդրումների խորը և համակողմանի վերլուծության:

Այս հանգամանքով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Հայաստանի և Իրանի ներդրումների վերլուծությանն են նվիրված ինչպես իրանցի, հայ, այնպես էլ այլ ազգի տնտեսագետների աշխատություններ: Այս առումով իրենց մեծ ավանդն ունեն Թ.Թորոսյանի, Հ.Բագրատյանի, Զ.Թադևոսյանի, Դ.Հախվերդյանի, Գ.Նազարյանի Ա.Մարջանյանի,

Լ.Շիրինյանի, Թ.Հակոբյանի, Ա.Ռուբինշտեյնի, Օ.Սմոլենսկիի, Ա.Մալեկիի, Ե.Օտոլենդիի, Մ.Նավեյի, Ս.Դեհքանի և այլոց աշխատությունները:

Արենախոսության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է վերլուծել իրանական ՕՌԻՆ-ի վիճակը ՀՀ-ում, բացահայտել դրանց ներգրավման խոչընդոտները և առաջարկել իրանական ՕՌԻՆ-երի ծավալների հետագա ընդլայնման հնարավորություններ և ուղիներ:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ՕՌԻՆ էությունը և պարզաբանել զարգացման տարբեր մակարդակներում գտնվող տնտեսությունների համար ՕՌԻՆ ներգրավման տեսագործական հիմքերը,
- քննարկել ՀՀ-ում և ԻԻՀ-ում օտարերկրյա ներդրումների արդի միտումները,
- գնահատել ԻԻՀ-ում և ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված օրենքների ազդեցությունը ՕՌԻՆ ներգրավման դինամիկայի վրա,
- ներկայացնել հայ-իրանական ներդրումների կառուցվածքն ու դինամիկան,
- իրականացնել ՀՀ ներդրումային դաշտի ՈԻԹՍՀ /SWOT/ վերլուծություն իրանական ներդրումների ներգրավման տեսանկյունից,
- բացահայտել Հայաստանի շուկայում գործող իրանական կազմակերպությունների առջև ծառացող հինմախնդիրները՝ դրանց շրջանակում անցկացվող սոցիոլոգիական հարցման հիման վրա,
- վեր հանել իրանական ՕՌԻՆ ներգրավման համար նպաստավոր բնագավառները և ճյուղերը ՀՀ-ում,
- մշակել և առաջարկել հայ-իրանական ներդրումային համագործակցության ոլորտում հետագա բարելավման հեռանկարային ուղղությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում հայ-իրանական տնտեսական հարաբերությունները, իսկ առարկան՝ ԻԻՀ կողմից ՀՀ-ում իրականացվող ՕՌԻՆ-երը:

Արենախոսության տեսական, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը:

Ատենախոսության շրջանակներում ներկայացված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՀՀ, ԻԻՀ և այլ երկրների մասնագետների և միջազգային հետազոտական կառույցների գիտական աշխատություններն ու զեկույցները:

Աշխատանքում վիճակագրական տվյալների հետազոտման և վերլուծության նպատակով հեղինակն օգտագործել է Ms Excel 2007 և EViews 4.1 ծրագրային փաթեթները:

Ատենախոսության տեղեկատվական և վիճակագրական տվյալների բազայի հիմքը հանդիսացել են Միջազգային արժույթային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական վիճակագրական տվյալները,

ինչպես նաև՝ ատենախոսության շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հարցումները:

Արենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները:

Ատենախոսությունում իրականացված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսագործական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթները հետևյալն են.

- Ռեգրեսիոն վերլուծության միջոցով ցույց է տրվել օտարերկրյա ներդրումներին վերաբերող օրենսդրական դաշտի բարելավման ազդեցությունը ներդրումների ներգրավման վրա ՀՀ-ում և ԻԻՀ-ում և, բացահայտվել է, որ օրենսդրական բարեփոխումների իրականացումը ավելի արագ և մեծ չափով է ազդում ՕՈՒՆ ներգրավման վրա ԻԻՀ-ում, քան ՀՀ-ում,
- Բ.Բալասայի կողմից առաջադրված բացահայտ, ինչպես նաև՝ Ռ.Հաուսմանի և Բ.Կլինգերի կողմից առաջադրված ներուժային համեմատական առավելության ինդեքսի հաշվարկման արդյունքում հիմնավորվել և առաջարկվել են ՀՀ տնտեսությունում իրանական ՕՈՒՆ-երի ներգրավման առաջնահերթ ոլորտները և ճյուղերը կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածում,
- ՀՀ-ում գործող 3492 իրանական կազմակերպությունների 10%-ի շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման և ՀՀ ու ԻԻՀ ներդրումային դաշտի համեմատական վերլուծության հիման վրա առաջարկվել են ՀՀ-ում իրանական ՕՈՒՆ ծավալների ավելացման համար իրականացնել համապատասխան տնտեսակազմակերպական միջոցառումներ:

Հեղազոտության արդյունքների գիտագործական նշանակությունը:

Ատենախոսությունում ստացված արդյունքները տեսագործական հիմք են ծառայում հայ-իրանական ներդրումային հիմնախնդիրների դիտարկմամբ զբաղվող տնտեսագետների համար: Ատենախոսությունում մշակված ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված գործնական կիրառություն ունեցող արդյունքները կարող են կարևորվել ՀՀ ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացնող պետական մարմինների համար: Բացի այդ, ատենախոսությունում իրականացված վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ իրանցի գործարարների համար՝ ՀՀ-ում իրանական ՕՈՒՆ-երի համար առաջնահերթ ոլորտների ընտրության տեսանկյունից:

Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Աշխատանքի արդյունքում ստացված գիտական դրույթները հեղինակի կողմից հրապարակվել են վեց գիտական հոդվածներում, ինչպես նաև քննարկվել են ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ՄՏՀ ամբիոնի նիստերում, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաժողովներում:

Արենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, 16 աղյուսակից, 33 գծապատկերից ու

հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 153 էջի վրա՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** ներկայացվել է ատենախոսության թեմայի արդիականությունը և հրատապությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, մեկնաբանվել են հետազոտության օբյեկտը և առարկան, հակիրճ ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթ պարունակող դրույթները, դրանց գործնական նշանակությունը, արդյունքների հրապարակումը, ինչպես նաև՝ ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «ՕՈՒՆ-ի տեսական հիմնադրույթները» գլխում ներկայացվում է ՕՈՒՆ էությունը, համակարգվում են այն մեկնաբանող տեսությունները, ինչպես նաև անդրադարձ է կատարվում ՕՈՒՆ գլոբալ և տարածաշրջանային միտումներին:

Ներդրումների ներգրավումը հատկապես կարևոր է անցումային տնտեսություններում, որտեղ սեփական ներդրումների սահմանափակ ծավալը շղթայաբար հանգեցնում է բազմաթիվ անցանկալի հետևանքների՝ աշխատատեղերի անբավարար քանակ, աղքատություն, պետական բյուջեի եկամուտների սակավություն, պետական ներդրումների չնչին հնարավորություն և այլն, որոնք խոչընդոտում են երկրի պոտենցիալ զարգացման հնարավորությանը: Մասնագիտական գրականության մեջ առկա են ՕՈՒՆ ազդեցությունը տնտեսության զարգացման վրա բնորոշող բազմաթիվ տեսություններ: ԻԻՀ-ն և ՀՀ-ն զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ են, ուստի ՕՈՒՆ տեսությունների վերլուծությունը իրականացվել է ԻԻՀ և ՀՀ տնտեսություններում ՕՈՒՆ ներգրավման տեսանկյունից և այդ տեսությունների կիրառման հնարավորության տեսանկյունից: Ինչպես նշվում է Գելբրեյթի միջազգային կորպորացիաների տեխնոլոգիական տեսությունում¹, զարգացող և անցումային երկրները սկզբնական ժամանակահատվածում հնարավորություն չունեն համաշխարհային տեխնոլոգիական նորարարությունների ներդրման և դրանցից պետք է օգտվեն ՕՈՒՆ ներգրավման միջոցով, բացի այդ, ըստ Վեռնոնի ապրանքի միջազգային արտադրության ցիկլի տեսության²՝ օտարերկրյա ներդրողների համար շուկան որպես կանոն գրավիչ է թվում, երբ ներդրում պետք է կատարվի հասունության փուլում գտնվող ապրանքի արտադրության ոլորտում, առավել շահավետ կլինի, եթե երկիրը դա զուգակցի ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծմամբ: Այս տեսությունների հիմնադրույթներն էլ կիրառվել են հետագայում իրանական ներդրողներին ՀՀ տնտեսության առաջնահերթ ոլորտների առաջարկման համար: Հայմերի կողմից առաջարկված վերազգային

¹ Dunn S.P., Pressman S., «The economic contributions of John Kenneth Galbraith» // Review of Political Economy, Vol 17, N2, 2005, pp.161-209.

² R. Vernon. «International investments and international trade in the product life cycle» // Quarterly Journal of Economics, May 1966, pp. 190-207.

կորպորացիայի և շուկայի անկատարության տեսության³ համաձայն անցումային և զարգացող երկրներում շուկայի անկատարությունը՝ ցածր մրցակցությունը տեղական արտադրողների կողմից, տեխնոլոգիական զարգացվածության ցածր մակարդակը և այլն, գրավում են ՎԱԿ-երին, քանի որ շուկա մտնելով, նրանք կարող են դառնալ առաջատար և թելադրել շուկայի պայմանները, այս տեսությունն էլ բացատրում է ներկայումս ԻԻՀ-ում առկա բազմաթիվ ՎԱԿ-երի առկայությունը: Ի լրումն այս տեսության կարելի է նշել Նիկկերբոկերի Օլիգոպոլիայի և ՕՈԻՆ տեսությունը⁴, համաձայն որի անցումային և զարգացող երկրներում հակամենաշնորհային քաղաքականությունը դեռևս շատ թույլ է իրականացվում, ուստի նմանատիպ շուկաներում հաճախ առաջանում են օլիգոպոլ ոլորտներ, հատկապես՝ ՕՈԻՆ ներգրավման արդյունքում: Այս տեսությունն էլ բացատրում է ներկայումս ՀՀ և ԻԻՀ տնտեսության որոշ ոլորտներում տիրող իրավիճակը: Ի լրումն ՎԱԿ-երի և ՕՈԻՆ տեսության առաջ է քաշվել Բակկիի և Կասսոնի միջազգայնացման տեսությունը⁵, համաձայն որի ՎԱԿ-երը, օգտագործելով իրենց նորարարությունների ներդրումը արտերկրում՝ կարողանում են զգալի հաջողությունների հասնել: Այս տեսությունը հատկապես արդիական է դառնում այն երկրների համար, որոնք ունեն մեծ տնտեսություն և միաժամանակ վարում են համեմատաբար փակ քաղաքականություն, օրինակ՝ Իրանը: Այս դեպքում խոշոր ՎԱԿ-երին միանգամայն ձեռնտու է լինում արտադրություն հիմնել տվյալ երկրի ներսում և բավարարել ներքին պահանջարկը: Կոդիման իր «թռչող սագերի» տեսությամբ բացատրում է յուրաքանչյուր անցումային, զարգացող տնտեսության բնականոն զարգացումը՝ նախ՝ երկիրը գրեթե չունի արտադրություն և ներքին պահանջարկը բավարարվում է ներմուծման միջոցով, ապա զարգացման որոշակի մակարդակից սկսած երկրում հիմնվում են տեղական և օտարերկրյա կազմակերպություններ, որոնք էլ զարգանալով՝ կարողանում են բավարարել ոչ միայն ներքին պահանջարկը, այլև արտաքին պահանջարկի որոշակի մաս⁶: Պորտերի մրցակցային առավելությունների տեսությամբ⁷ բացատրվում է զարգացող և անցումային երկրների այն իրողությունը, որ դրանցում առկա են էժան հումք և աշխատուժ, տեղական թույլ մրցակցություն, պետական կարգավորման թույլ մակարդակ, մասնավորապես՝ շրջակա միջավայրի աղտոտման համար գանձվող վճարների տեսանկյունից և այլն, որոնք թույլ են տալիս օտարերկրյա ներդրողին արագորեն մրցակցային առավելություն ունենալ տվյալ երկրում: Այս տեսությանը բավական մոտ է Դաննինգի էկլեկտիկ

³ Hymer, S. H. «The International Operations of National Firms: A Study of Direct Foreign Investment» // PhD Dissertation. Published posthumously. The MIT Press, 1976. Cambridge, Mass, 1960, pp. 26-45.

⁴ Knickerbocker, Frederic, «Oligopolistic Reaction and Multinational Enterprise» // Cambridge, MA: Harvard University Press, 1973, pp.12-67.

⁵ Buckley P. J. and Casson M. «The Future of the Multinational Enterprise» // New York: Holmes and Meier, 1976; A. M. Rugman. Inside the Multinationals. New York: Columbia University Press, 1981, 116 pages.

⁶ Kiyoshi Kojima «The “flying geese” model of Asian economic development: origin, theoretical extensions, and regional policy implications» // Journal of Asian Economics, Volume 11, Issue 4, Autumn 2000, pp. 375-401.

⁷ Porter, M.E., Competitive Advantage: Creating and Sustaining Superior Performance, Free Press, New York, NY, 1985, pp.32-45.

տեսությունը⁸, համաձայն որի մրցակցային նշված առավելությանը գումարվում է երկրի վիճակը՝ արտաքին առևտրի ազատականացման միտում, թափանցիկ ֆինանսական համակարգ և այլն, որը թույլ է տալիս այն օտարերկրյա ներդրողներին, որոնք ունեն միջազգայնացման միտում և հնարավորություն հայտնվել տվյալ երկրի շուկայում: Իսկ երկրի ՕՌԻՆ ներգրավումից մինչև զարգացման այնպիսի մակարդակի առկայությունը, երբ նա կարող է իրեն թույլ տալ ՕՌԻՆ արտահանում դեպի այլ երկրներ, բացատրվում է Նարրուլոյի ներդրումային ուղիների զարգացման տեսությամբ: Վերոնշյալ տեսություններով է բացատրվում այն հանգամանքը, որ ներկայումս ԱՄՆ-ն, Չինաստանը և Հոնկոնգը հանդիսանում են խոշորագույն ՕՌԻՆ և՛ դոնոր, և՛ ռեցիպիենտ երկրներ:

Այսպիսով, բոլոր վերոնշյալ տեսությունները բացատրում են և հիմք են ծառայում թե ՀՀ, թե ԻԻՀ տնտեսություններում կատարվող ՕՌԻՆ-երի շարժառիթների համար: Այս տեսական հիմնադրույթների և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մեր կողմից ատենախոսության հաջորդ գլուխներում առաջարկվել են ՀՀ տնտեսությունում իրանական ՕՌԻՆ ներհուսք ապահովող լծակներ և ուղիներ:

Արենախոսության երկրորդ՝ «Իրանի Իսլամական Հանրապետության ՕՌԻՆ վերլուծությունը և ՀՀ հետ համագործակցությունը» գլխում վերլուծվում է ԻԻՀ ՕՌԻՆ ներհուսքի և արտահուսքի դինամիկան և կառուցվածքը, ինչպես նաև քննարկվում է ՀՀ հետ ներդրումային համագործակցությունը:

Իրանի Իսլամական Հանրապետությունը գտնվում է Հարավ-Արևմտյան Ասիայում և զբաղեցրած տարածքով աշխարհում գրավում՝ 18-րդ տեղը, իսկ բնակչության թվաքանակով՝ 17-րդ տեղը: Չնայած ԻԻՀ նկատմամբ մինչև բավական վերջերս կիրառվող պատժամիջոցների՝ ՀՆԱ-ի ցուցանիշով ևս ԻԻՀ-ն աշխարհում գրավում է առաջատար դիրք՝ 20-րդ տեղը⁹, իսկ ՕՌԻՆ ծավալներով՝ 62-րդ¹⁰: ՕՌԻՆ ներգրավման և պաշտպանության մասին օրենքն Իրանում ընդունվել է 2002թ., ուստի դիտարկենք այդ ժամանակահատվածից մինչ օրս Իրանի ՕՌԻՆ ներհուսքն ու արտահուսքը՝ ըստ երկրների: 2002-2014 թթ. Իրանում հիմնական ներդրումներն իրականացվել են Գերմանիայի, Նիդերլանդների և Կանադայի կողմից՝ 10% և ավելի: Դիտարկվող ժամանակահատվածում ԻԻՀ ՕՌԻՆ ներհուսքն ապահովվել է հիմնականում հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության, էլեկտրաէներգիայի, քիմիական և պլաստմասսայի արդյունաբերության ոլորտների հաշվին: Իսկ Իրանի կողմից արտերկրում իրականացված ՕՌԻՆ-երը հիմնականում ուղղվել են Ֆրանսիա, Գերմանիա և Լյուքսեմբուրգ՝ ավելի, քան 10% յուրաքանչյուրում¹¹: Նշված


⁸ Dunning J. H.. «Toward an eclectic theory of international production: Some empirical tests» // Journal of International Business Studies, 11, J. H. Dunning. International Production and the Multinational Enterprise. London: Allen and Unwin, 1981. pp. 9-31.

⁹ Official web page of Central Intelligence Agency (տեղեկատվությունը հասանելի է <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/rankorder/2001rank.html#ir> հասցեում)

¹⁰ Official web page of Central Intelligence Agency (տեղեկատվությունը հասանելի է <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/rankorder/2198rank.html#ir> հասցեում)

¹¹ Հաշվարկը կատարվել է հեղինակի կողմից հետևյալ կայքերի տվյալների հիման վրա. ԻԻՀ ԿԲ պաշտոնական կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.cbi.ir/page/8020.aspx> հասցեում),

Ժամանակահատվածում ԻԻՀ կողմից ՀՀ-ում կատարված ներդրումները միջին հաշվով կազմել են ԻԻՀ ՕՈՒՆ արտահոսքի 1%-ը: Անդրադառնալով ՀՀ ՕՈՒՆ վերլուծությանը նշենք, որ 2015թ. ՀՀ տնտեսության ոլորտներից ավելի քան 10% ՕՈՒՆ ներհոսք ապահովել են էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի ապահովման և հեռահաղորդակցության ոլորտները, իսկ հիմնական օտարերկրյա ներդրողներ հանդիսացել են ՌԴ-ն, Ֆրանսիան, Գերմանիան, Արգենտինան (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. 2015թթ. ՀՀ ՕՈՒՆ համախառն հոսքերի բաշխվածությունն՝ ըստ երկրների¹²

ՀՀ-ում ԻԻՀ կողմից կատարված ներդրումները հիմնականում ունեն պատահական բնույթ և չեն ենթարկվում որևէ օրինաչափության: Այդուհանդերձ, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում իրականացված օտարերկրյա ներդրումներում ԻԻՀ տեսակարար կշիռը միջին հաշվով բավական փոքր է, սակայն այլ է պատկերը առանձին ոլորտներում իրականացված օտարերկրյա ներդրումները վերլուծելիս. 2002թ. ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացված ՕՈՒՆ-ի ընդհանուր ծավալում ԻԻՀ կողմից իրականացված ՕՈՒՆ-ը կազմել են 12.2%, իսկ մեծածախ առևտրի ոլորտում՝ 15%: Առավել հետաքրքրական է պատկերը քիմիական արդյունաբերության ոլորտում. 2004թ., 2006թ. և 2007թ. տվյալ ժամանակահատվածում ՀՀ քիմիական արդյունաբերության ոլորտում իրականացված ՕՈՒՆ-երի համապատասխանաբար՝ 35.7%, 62.6%, 78.4%-ն, ապահովվել են ԻԻՀ կողմից իրականացված ՕՈՒՆ-ի միջոցով: Ընդ որում, ՀՀ քիմիական արդյունաբերության ոլորտում ԻԻՀ կողմից ՕՈՒՆ իրականացվել են ավելի հաճախ, քան որևէ այլ ոլորտում: Սակայն, հարկ է նշել, որ այդուհանդերձ 2002-2015թթ. ժամանակահատվածում ԻԻՀ կողմից իրականացված ՕՈՒՆ-ի ծավալում առաջին տեղում է գտնվում մեծածախ առևտրի ոլորտը, 2-րդ տեղում՝ գյուղատնտեսությունը, 3-ում՝ միայն քիմիական արդյունա-

ԻԻՀ Վիճակագրության Կենտրոնի պաշտոնական կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.amar.org.ir/Default.aspx?tabid=133> հասցեում), Knoema's search engine կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <https://knoema.com> կայքում), Organization for Investment, Economic and Technical Assistance of Iran պաշտոնական կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.investiniran.ir> հասցեում)

¹² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական պատկերը 2016թ. հունվար-փետրվարին, էջ 90, [/http://armstat.am/file/article/sv_02_16a_420.pdf/](http://armstat.am/file/article/sv_02_16a_420.pdf). Գծապատկերում ներկայացված են 5%-ից ավել մասնաբաժին ունեցող երկրները, մյուսները ներառված են՝ <այլ> հոդվածի ներքո:

բերությունը, իսկ տրանսպորտի և պահեստավորման, շինարարության և մանրածախ առևտրի ոլորտներում իրականացված ՕՈՒՆ-երը բավական փոքր ծավալների են՝ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2002-2015թթ. ՀՀ տնտեսության առանձին ոլորտներում ԻԻՀ կողմից իրականացված ՕՈՒՆ, գումարային մեծություն, մլն դրամ¹³

	Գյուղատնտ.	Շինարարութ.	Մեծածախ առևտուր	Մանրածախ առևտուր	Տրանսպ. և պահեստ.	Քիմ.արդ.
ԻԻՀ կողմից իրականացված ՕՈՒՆ գումարը 2002-2015թթ.	414	2,2	1629,7	8	46,1	382,8

ԻԻՀ-ում ներդրումային դաշտը կարգավորող առաջին՝ «Ներդրումների ներգրավման և պաշտպանության» օրենքը ընդունվել է 1965թ., որը նախատեսում էր բազմաթիվ սահմանափակումներ: Հետագայում ընդունվեցին ներդրումային դաշտը կարգավորող ավելի մեղմ օրենքներ և իրավական ակտեր, որոնք աստիճանաբար առավել մեծ չափով էին նպաստում ՕՈՒՆ ներհոսքին: Սակայն Իրանում ներդրումային գրավիչ միջավայրի ստեղծման նպատակով բեկումնային տարի կարելի է համարել 2002թ.-ն¹⁴, երբ ընդունվեց «Ներդրումների խթանման և պաշտպանության օրենքը» (FIPPA): ԻԻՀ ներդրումային միջավայրի հետագա բարեփոխումներն իրականացվում են ընդունված օրենքին լրացնող և ճշգրտումներ մտցնող օրենսդրական ակտերով: ԻԻՀ ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված հաջորդ քայլերն իրականացվել են 2013թ., երբ ընդունվեցին նոր օրենսդրական ակտեր, համաձայն որոնց գրեթե նույնականացվում էին օտարերկրյա ներդրողի և ներքին ներդրողի իրավունքները: Բարեփոխումների այս փուլի արդյունքում հնարավորություն է տրվում 100%-ով օտարերկրյա կապիտալով ձեռնարկության հիմնումը: Բացի այդ, 2013-2015 թթ. իրականացված օրենսդրական բարեփոխումների արդյունքում, թեպետ, ոչ շատ, սակայն փոփոխություններ են տեղի ունեցել ՕՈՒՆ առնչվող մի շարք ժամկետների առումով: Բնականաբար, ԻԻՀ-ում օտարերկրյա ներդրումների իրականացման որոշումների կայացման վրա ազդում է նաև ԻԻՀ հարկային համակարգը՝ իր զգալիորեն տարբերվող հարկադրույքներով¹⁵. Եկամտային հարկի դրույքաչափն ԻԻՀ-ում 10-35% է՝ կախված գործունեության ոլորտից, սեփականության հարկ՝ 0.5-65%՝ կախված սեփականության տեսակից, ԱԱՀ՝ 6%՝ 5 տարին մեկ անգամ վերանայվող, շահութահարկ՝ 15-35%՝ կախված շահույթի չափից:

¹³ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալներ. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը՝ 2004թ. հունվար-փետրվարին (էջ 66-69), 2005թ. հունվար-փետրվարին (էջ 67-69), 2007թ. հունվար-փետրվարին (էջ 78-81), 2009թ. հունվար-փետրվարին (էջ 73-75), 2013թ. հունվար-փետրվարին (էջ 86-90), 2014թ. հունվար-փետրվարին (էջ 80-84), 2015թ. հունվար-փետրվարին (էջ 85-90):

¹⁴ Akbar Tavakoli, and Mahmood Khataei «The Host Iranian Economy and Foreign Direct Investment: A Comparative Analysis» // Money and Economy, Vol. 5, No.1, pp.113-144 / <http://jme.mbri.ac.ir/article-1-33-en.pdf/>

¹⁵ Organization for Investment, Economic and Technical Assistance of Iran պաշտոնական կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.investiniran.ir/en/whyiran1/tax> հասցեում) կայքից:

ՀՀ ներդրումային դաշտի հիմքը դրվեց 1995թ. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ¹⁶: Այնուհետև ընդունվեցին ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված այլ օրենքներ և իրավական ակտեր:

Հասկանալի է, որ ներդրումային դաշտը կարգավորող օրենսդրական բարեփոխումները որոշակի ազդեցություն են ունենում ՕՈՒՆ ներգրավման վրա: Էկոնոմետրիկ գործիքների՝ կոռելացիոն, ռեգրեսիոն վերլուծության և պատճառականության թեստի միջոցով փորձ է կատարվել պարզել, թե ՕՈՒՆ ներգրավման վրա ինչպիսի ազդեցություն են ունենում տվյալ երկրի ՀՆԱ-ի փոփոխությունը, ինչպես նաև ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրական բարեփոխումները: ԻԻՀ-ի համար ստացվել են հետևյալ արդյունքը՝ նույն ժամանակահատվածում ներդրումային դաշտի կարգավորմանն ուղղված օրենքի ընդունումը նվազեցնում է ՕՈՒՆ աճը 0.49 միավորով, նախորդ եռամսյակում ընդունված օրենքների արդյունքում ՕՈՒՆ աճը ավելանում է 0.14 միավորով, երկու եռամսյակ առաջ ընդունված օրենքների արդյունքում՝ 0.45 միավորով, երեք եռամսյակ առաջ ընդունված օրենքների արդյունքում՝ 1.75, իսկ չորս եռամսյակ առաջ ընդունված օրենքների արդյունքում՝ 0.23 միավորով: Իսկ ՀՀ-ում նույն ժամանակահատվածում ներդրումային դաշտի կարգավորմանն ուղղված օրենքի ընդունման արդյունքում ՕՈՒՆ աճը մեծանում է 0.6 միավորով, նախորդ եռամսյակում ընդունված օրենքների արդյունքում՝ 0.55 միավորով, երկու եռամսյակ առաջ ընդունված օրենքների արդյունքում՝ 0.43 միավորով, երեք եռամսյակ առաջ ընդունված օրենքների արդյունքում՝ 0.77, իսկ չորս եռամսյակ առաջ ընդունված օրենքների արդյունքում՝ 0.94 միավորով: Այսպիսով ստացվում է, որ ՀՀ ներդրումային դաշտի բարեփոխումները ՕՈՒՆ ներգրավման վրա ամենամեծ ազդեցությունն ունենում են չորս եռամսյակ անց, ուստի այս հանգամանքը պետք է հաշվի առնել հետագայում ՕՈՒՆ ներհոսք ապահովող քաղաքականության մշակման պարագայում:

Այսպիսով, ՀՀ ներդրումների ծավալում իրանական ներդրումներն ունեն շատ փոքր տեսակարար կշիռ և ոչ օրինաչափ բնույթ, սակայն ՀՀ՝ ԵՏՄ անդամակցությամբ մեծ հնարավորություններ են ստեղծվում իրանական ՕՈՒՆ ներգրավման համար: Օրենսդրական բարեփոխումները ԻԻՀ ՕՈՒՆ ներգրավման վրա ազդում են ավելի արագ և ավելի մեծ չափով, քան ՀՀ-ում: Սա կարող է բացատրվել երկու հիմնական հանգամանքով՝ շուկայի ծավալով և ներդրումային օրենսդրության համեմատաբար կատարելությամբ: ՀՀ-ում ներդրումային հիմնական օրենքն ընդունվել է 1995թ., իսկ ԻԻՀ-ում՝ 2002 թ., ուստի հետագա կատարելագործման արդյունքում ՀՀ ներդրումային դաշտը կարգավորող օրենսդրությունն առավել կատարելագործված է ԻԻՀ համեմատությամբ, ուստիև՝ յուրաքանչյուր նոր փոփոխություն ավելի քիչ ՕՈՒՆ ներհոսքի է հանգեցնում, քան ԻԻՀ-ում:

Արենախոսության երրորդ՝ «Իրանական ՕՈՒՆ-երը ՀՀ տնտեսությունում և հնարավոր հեռանկարային զարգացումները» գլխում դիտարկվում են իրանական ներդրումների ներգրավման տեսանկյունից ՀՀ ներդրումային դաշտի բարելավման ուղիները, ինչպես նաև հաշվարկների հիման վրա ցույց են տրվում իրանական ՕՈՒՆ ներգրավման համար ՀՀ տնտեսության նպաստավոր

¹⁶ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, ընդունված 31.07.1994թ.

ոլորտները: Հեղինակի կողմից բացահայտվել են ՀՀ ներդրումային դաշտի ուժեղ կողմերն ու հնարավորությունները, ինչպես նաև թույլ կողմերն ու սպառնալիքները իրանական ներդրումների ներգրավման տեսանկյունից: Այդ նպատակով վերլուծվել են ոչ միայն առկա ցուցանիշներն ու ռեսուրսակազմը, այլ նաև սոցիոլոգիական հարցում է անցկացվել ՀՀ-ում գործող իրանական կապիտալով իրավաբանական անձանց շրջանում: Հարցումն անցկացվել է 01.03.2016թ.-30.09.2016թ.՝ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործող 3492¹⁷ իրանական կապիտալով ձեռնարկություններից 347-ի¹⁸ շրջանում: Հարցման արդյունքում իրանցի գործարարների կողմից գնահատվել են հետևյալ գործոնները՝ արտադրական գործոններ, կազմակերպության գործունեության կազմակերպում, արտաքին շուկաներ մուտքի հասանելիություն, օրենսդրական դաշտ: ՀՀ-ում իրանական կապիտալով գործող 347 ձեռնարկությունների շրջանում կատարված հարցման արդյունքները ամփոփ տեսքով ներկայացված են ստորև:

Հարցվողների կողմից նշվել են հետևյալ թերությունները.

- աշխատուժի ներգրավման տեսանկյունից առկա են մշակութային և հաղորդակցման դժվարություններ (հարցվողների 65%),
- կապիտալի ներգրավման տեսանկյունից հանդիպող հիմնական խոչընդոտը առևտրային բանկերի կողմից տրվող վարկերի ավելի բարձր տոկոսներն են, ինչպես և հայ ներդրողների կողմից իրանական կապիտալով ձեռնարկությունում ներդրում կատարելու անպատրաստակամությունը (հարցվողների 87%),
- առկա են դժգոհությունների «կազմակերպություն-պետություն» վարչական փոխշփման տեսանկյունից, մասնավորապես՝ մաքսային մարմինների աշխատակիցների թերի, դանդաղ և սուբյեկտիվ աշխատանքից, բացի այդ կազմակերպությունում իրականացվող ստուգումների պարբերականությունը հաճախ խանգարում է դրա բնականոն գործունեությանը (հարցվողների 5%),
- զգալի խնդիրներ է առաջացնում նաև էլեկտրաէներգիայի բարձր սակագինը (հարցվողների 85%),
- ԵՏՄ անդամակցությամբ պայմանավորված հաշվապահական հաշվառման փոփոխությունների արդյունքում բարդեցվել է հաշվապահական հաշվառման գործընթացը (հարցվողների 4%),
- բաշխման տեսանկյունից հիմնական դժգոհությունը վերաբերում է մանրածախ խանութների կողմից իրանական ապրանքների ցուցադրման հետ կապված անհավասար վերաբերմունքին (հարցվողների 8%),
- արտաքին շուկաներ դուրս գալու տեսանկյունից կան դժգոհություններ Վրաստանի սահմանը հատելիս մեծ բեռնատարների համար ստեղծվող խոչընդոտներից (հարցվողների 1%),

¹⁷ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_5284689551761_stat_2015.pdf հասցեում /էջ 7/)

¹⁸ Ընտրանքը որոշվել է՝ ըստ Survey Monkey հետազոտական հարթակի կայք էջի (տեղեկատվությունը հասանելի է <https://www.surveymonkey.com/mp/sample-size-calculator> հասցեում/) հաշվարկի, 95% վստահելիության մակարդակում և 5% սխալի հավանականության պարագայում:

- օրենսդրական տեսանկյունից կազմակերպություններից որոշների դժգոհությունը ելնում է այն հանգամանքից, որ ՀՀ մրցակից կազմակերպությունների հետ առաջացած վեճերի լուծման համար նրանք ստիպված են լինում ծախսել բավական երկար ժամանակ և ֆինանսական միջոցներ (հարցվողների 10%):

Հարցվողների կողմից նշվել են հետևյալ առավելությունները.

- աշխատուժի բարձր կրթական մակարդակը, ինչպես նաև բուհական և ետբուհական տարիքի անձանց կողմից ցածր աշխատավարձով աշխատելու պատրաստակամությունը և աշխատանքն արագ յուրացնելու ունակությունը (հարցվողների 23%)
- նոր տեխնոլոգիաներն առավել հասանելի են ի տարբերություն ԻԻՀ-ի (հարցվողների 27%)
- հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով հանձնման հնարավորությունը հեշտացնում է կազմակերպության գործունեությունը (հարցվողների 82%)
- գների մակարդակը համեմատաբար կայուն է՝ ի տարբերություն ԻԻՀ-ի (հարցվողների 3%)
- ՀՀ-ում արտաքին շուկաների մասին տեղեկատվության հասանելիությունն ավելի բաց և հավաստի է, քան ԻԻՀ-ում (հարցվողների 98%)
- ՀՀ-ում հարկման դրույքները ավելի ցածր են, քան ԻԻՀ-ում և բացի այդ՝ ՀՀ-ում սահմանված հարկերի քանակն ավելի քիչ է, քան ԻԻՀ-ում (հարցվողների 98%):

Հարցման արդյունքները հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմելու ՀՀ-ում գործունեություն ծավալելու ընթացքում իրանցի ներդրողների հանդիպած խնդիրների մասին: ՀՀ ներդրումային դաշտի մասին առավել հիմնավոր պատկեր ստանալու համար, ի լրումն իրականացված հարցման արդյունքների, իրականացվել է նաև SWOT վերլուծություն:


Ամփոփված արդյունքները ներկայացված են ստորև:

Ուժեղ կողմեր. հասարակության գրագիտության աստիճանը ՀՀ-ում ավելի բարձր է; գյուղատնտեսությունում մեկ աշխատողի ստեղծած ավելացված արժեքն անհամեմատ բարձր է ԻԻՀ նույն ցուցանիշից; աշխատուժի ներգրավման նվազագույն ծախսը ՀՀ-ում ավելի ցածր է, քան ԻԻՀ-ում; հարկային բարեփոխումների արդյունքում ներկայումս ՀՀ-ում բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակն ավելի քիչ է, քան նախկինում և բացի այդ այն ավելի նվազ է, քան ԻԻՀ-ում (տե՛ս գծապատկեր 2); ՀՀ-ում բիզնես սկսելու ծախսերը զգալիորեն նվազել են ներկայումս և ավելի քիչ են, քան ԻԻՀ-ում¹⁹; ՀՀ-ում ներդրումների պաշտպանությունն ամրագրված է օրենքով; ՀՀ-ում ՕՈՒՆ-երը պաշտպանված են նաև ոչ տնտեսական ռիսկերից, քանի որ ՀՀ-ն 1995թ.-ից անդամակցում է Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալությանը²⁰; ՀՀ-ում գործում են ազատ տնտեսական

¹⁹ The Nation Master Data Base Of Economic Indicators կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.nationmaster.com/country-info/compare/Armenia/Iran> հասցեում)

²⁰ Official web page of Multilateral Investment Guarantee Agency (տեղեկատվությունը հասանելի է <https://www.miga.org/who-we-are/member-countries> հասցեում)

գոտիներ, որոնցում գործունեություն ծավալելով՝ գործարարները օգտվում են հարկային և մաքսային պարզեցված ընթացակարգից:



Գծապատկեր 2. Բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը ՀՀ-ում և ԻՀ-ում²¹

Թույլ կողմեր. ՀՀ ընդերքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հարուստ չէ բնական ռեսուրսներով; ՀՀ տնտեսության մրցունակություն 2014-2015թթ. նվազել է ինչպես ի համեմատ 2013թ., այնպես էլ ԻՀ տնտեսության նկատմամբ:

Հնարավորություններ. ԵՏՄ տարածքից արտոնյալ պայմաններով ռեսուրսների հասանելիություն, ՀՀ-ի տնտեսությունն աճում է ավելի բարձր տեմպերով, քան ԻՀ տնտեսությունը²²; ՀՀ-ում առկա է ինտերնետի օգտատերերի աստիճանաբար աճող և ԻՀ-ի համեմատ ավելի մեծ քանակ; ըստ գործարարություն իրականացնելու դյուրինության ՀՀ-ն աշխարհում զբաղեցնում է 35-րդ²³ տեղը, իսկ ԻՀ-ն՝ 118-րդ²⁴; բիզնեսի գրանցման համար ՀՀ-ում անհրաժեշտ է 3 օր, իսկ ԻՀ-ում՝ 15²⁵; ՀՀ-ում առկա է քաղաքական կայունության, կառավարության գործունեության արդյունավետության, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի, տնտեսական ազատության ինդեքսի, առևտրի բացվածության ինդեքսի ավելի բարձր մակարդակ, քան ԻՀ-ում:

Սպառնալիքներ. Արցախյան հակամարտության արդյունքում առաջացող անկայուն ռազմական վիճակ; արտահանման ուղղվածություն ունեցող կազմակերպությունների համար որպես սպառնալիք կարող ենք նշել Վրաստանի կողմից իր տարածքով անցնող բեռնատարների անօրինական վճարների գանձման շարունակումը; ՕՌԻՆ ներգրավման երկարաժամկետ ռազմավարական ծրագրի բացակայությունը:

Նշված թերություններից և սպառնալիքներից մի քանիսն ունեն ժամանակավոր բնույթ, մասնավորապես՝ բանկերի կանոնադրական կապիտալի նվազագույն շեմի բարձրացման արդյունքում առևտրային վարկերի

²¹ The global economy data base of economic indicators կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.theglobaleconomy.com/compare-countries> հասցեում)

²² The index mundi data base of economic indicators կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.indexmundi.com/factbook/compare/armenia.iran/economy> հասցեում)

²³ The trading economics data base of economic indicators կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.tradingeconomics.com/armenia/indicators> հասցեում)

²⁴ The trading economics data base of economic indicators կայք էջ (տեղեկատվությունը հասանելի է <http://www.tradingeconomics.com/iran/indicators> հասցեում)

²⁵ Official web page of World Bank (տեղեկատվությունը հասանելի է <http://data.worldbank.org/indicator/IC.REG.DURS> հասցեում)

տոկոսադրույքների հետ կապված անորոշությունը, ինչպես նաև ԵՏՄ անդամակցության արդյունքում հաշվապահական, հարկային և մաքսային ընթացակարգերում առաջացող անորոշությունը:

Ներպետական լուծում պահանջող խնդիրների մի խումբ էլ իրենցից ներկայացնում են համակարգային խնդիրներ և վերաբերում են ոչ միայն իրանական ներդրումներին կամ ՀՀ ներդրումային դաշտին, այլ ՀՀ տնտեսությանն՝ ամբողջապես: Այդպիսի խնդիրներից են կոռուպցիան, մենաշնորհները, արժեթղթերի շուկայի և ֆոնդային բորսայի թույլ զարգացվածությունն ու իրավական կարգավորման անբավարար մակարդակը և այլն: Բնականաբար, այս խնդիրներից յուրաքանչյուրի լուծումն առանձին վերլուծության կարիք ունի, սակայն ակնհայտ է, որ դրանց լուծման պարագայում միայն հնարավոր կլինի օտարերկրյա ներդրումների առավել մեծ ծավալների ներգրավման: Կոռուպցիայի և մենաշնորհների վերացման կամ գոնե նվազեցման արդյունքում իրանցի գործարարների կողմից ստացվող օգուտներն ակնհայտ են: Իսկ ահա արժեթղթերի շուկայի կամ ֆոնդային բորսայի զարգացումը կարող է լուծում տալ իրանցի գործարարների համար մեր կողմից նշված այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են՝ կապիտալ ռեսուրսի դժվար հասանելիությունը, հայ գործարարների կողմից ՀՀ-ում գործող իրանական կապիտալով ձեռնարկություններում ներդրումներ կատարելու անպատրաստականությունը և այլն: Ներկայումս ոլորտի թույլ զարգացվածությունն ու իրավական կարգավորման անբավարար մակարդակը նպաստում են նրան, որ ՀՀ-ում գործող օտարերկրյա կազմակերպություններից որոշները գերադասում են ցուցակագրվել եվրոպական բորսաներում և ոչ հայկականում: Ուստի ոլորտի զարգացումը կարող է լուծել շատ խնդիրներ և զգալիորեն ավելացնել ՀՀ ուղղվող ներդրումները:

Իրանցի գործարարների՝ ՀՀ-ում գործունեություն ծավալելու տեսանկյունից առկա մյուս խոչընդոտը տեղական արտադրողների հետ առաջացող վեճերի կարգավորման առանձին մարմնի բացակայությունն է: Այս տեսանկյունից. Հեղինակի կարծիքով, անհրաժեշտ է ստեղծել առանձին մարմին, որը կգրավի բացառապես օտարերկրյա ներդրողների և տեղական ներդրողների միջև ծագող վեճերի քննամամբ և խորհրդատվությամբ: Այս մարմինն, ի դեպ, կարող է լինել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին կից: Նրա ձևավորման համար ֆինանսները պետք է հատկացվեն պետական բյուջեից:

Վերջապես, նշված սպառնալիքներից վերջինը՝ ՀՀ-ում ՕՈՒՆ ներգրավման երկարաժամկետ ռազմավարական ծրագրի բացակայությունը, անհապաղ լուծում պահանջող խնդիրներից է: Հեղինակի կողմից մշակվել են այն դրույթներն ու անհրաժեշտ հարցադրումները, որոնք պետք է անպայմանորեն ներառված լինեն մշակվելիք ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ):

- Նախ և առաջ մշակվելիք ՌԾ-ում հստակորեն պետք է տարանջատվեն ՀՀ տնտեսության համար ռազմավարական հայտարարվող ոլորտները միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում՝ նշելով դրանցից յուրաքանչյուրի հետ կապված ակնկալվող թիրախային ցուցանիշները՝ ինչպես կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածների համար, այնպես էլ՝ դրանցից յուրաքանչյուրում լավագույն և վատագույն

սցենարների առկայության պարագայում: Սա հնարավորություն կտա օտարերկրյա ներդրողներին հստակ և կայուն գնահատական տալ տվյալ ոլորտների հնարավոր զարգացումներին՝ որպես ոլորտի զարգացման նվազագույն շեմ ընտրելով յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վատագույն սցենարով նախատեսված ցուցանիշները:

- Այնուհետև ՌԾ-ն պետք է որոշակի մեթոդաբանության հիման վրա հստակ հաշվարկներով ներկայացնի ՀՀ տնտեսության ներդրումների տեսանկյունից նպաստավոր ոլորտները նախկինում (դիցուք՝ 7-10 տարվա ժամանակային շարքի համար), ներկայում և ապագայում: Հասկանալի է, որ տնտեսությունը չունի ստատիկ բնույթ, այլ աճում է դինամիկ կերպով, ուստի նշվող ոլորտները մշտապես կենթարկվեն փոփոխության: Այդպիսով անհրաժեշտություն կառաջանա ՌԾ-ին կից յուրաքանչյուր տարեվերջին թողարկել այդ տարվա համար իրականացված նմանատիպ վերլուծության արդյունքում ստացված փոփոխությունները և հաջորդ տարիների համար փոփոխված սպասումները:
- ՌԾ-ով պետք է նախատեսվի յուրաքանչյուր տարի դրան կից հավելվածի թողարկում, որտեղ կնշվեն ՀՀ տնտեսության ուժեղ կողմերն ու հնարավորությունները: Նմանատիպ վերլուծություն իրականացվել է ատենախոսության միայն իրանցի գործարարների ներգրավման տեսանկյունից: Բնականաբար, ՌԾ-ում նախատեսվող այդ վերլուծությունը կլինի առավել ընդգրկուն և կենթարկվի պարբերական թարմացումների:
- ՌԾ-ն պետք է ունենա նաև առանձին բաժին՝ ՀՀ հիմնական և ներուժային ներդրումային գործընկեր երկրների համար առ այն, թե որ ոլորտներում տվյալ երկրի ներդրողներին առավել ձեռնտու կլինի իրականացնել ներդրումներ միայն տվյալ երկրին պատկանող կապիտալով և որ ոլորտներում՝ հայ գործընկերների հետ համատեղ ձեռնարկություն հիմնել: Բնականաբար, այս ցուցանիշները տարբեր կլինեն ինչպես ըստ տարիների, այնպես էլ՝ ըստ գործընկեր երկրների: Ուստի այս հատվածը ևս պետք է ունենա կից հավելված, որը մշտապես կթարմացվի: Ընդ որում, ստացված արդյունքները պետք է մշտապես ներկայացվեն հասցեական գործընկերներին՝ կլոր սեղանների, բիզնես ֆորումների կազմակերպման միջոցով:
- ՌԾ-ն պետք է համահունչ լինի ՀՀ ազգային անվտանգության և այլ ռազմավարական ծրագրերին և դրանում թիրախավորված ցուցանիշները չպետք է հակասեն որևէ այլ ռազմավարական ծրագրի առաջնահերթություններին:
- Այս համատեքստում ՌԾ-ն պետք է պարունակի ՀՀ ներդրումային դաշտին այս կամ այն կերպ առնչվող իրավական բարեփոխումների ակնկալվող փաթեթը՝ գոնե բարեփոխումների ուղղությունների թիրախավորմամբ:
- Ի վերջո, ՌԾ-ն պետք է ներառի հատուկ բաժին, որով կսահմանվեն օտարերկրյա ներդրումների համար ՀՀ-ում լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրները՝ ըստ ոլորտների կամ ընդհանուր: Ինչպես նաև պետք է նշվեն ֆինանսավորման աղբյուրների ֆինանսների գոյացումը և դրանց հնարավոր զարգացումներն ու ակնկալվող ցուցանիշները:

Այդուհանդերձ անգամ վերոնշյալ բոլոր բարեփոխումների իրականացման պարագայում, հասկանալի է, որ իրանցի գործարարները չեն կարող ներդրումներ իրականացնել ՀՀ տնտեսության բոլոր ոլորտներում, ուստի հեղինակի կողմից բացահայտ համեմատական առավելության և ներուժային համեմատական առավելության սկզբունքի հիման վրա բացահայտվել են այն ոլորտները, որոնցում իրանցի գործարարների կատարած ներդրումները կստեղծեն ավելի մեծ արդյունք՝ դիտարկելով 2 սցենար՝ 1. ԻԻՀ–ն չի անդամակցի ԵՏՄ–ին, 2. ԻԻՀ–ն կանդամակցի ԵՏՄ–ին: Արդյունքները ներկայացված են ստորև:

Սցենար 1. ՀՀ տնտեսությունում ներդրում իրականացնելով իրանցի գործարարները կարող են ակնկալել զգալի օգուտներ անգամ կարճաժամկետ հատվածում բանջարեղենի և այլ կերային արմատապտուղների, ուտելի մրգերի, բանջարեղենի վերամշակումից մթերքի, ծխախոտի և քարից, գիպսից, ցեմենտից իրերի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների, բուսական նյութերի, հանքաքարի, սոսնձի, գորգերի, ասեղնագործ կտորների, տրիկոտաժե պաստառների, կոշիկի, կերամիկական և ապակե իրերի արտադրության ոլորտներում, իսկ միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում՝ այլ տարբեր սննդամթերքի, մսից, ձկից մթերքների, օճառի, կենդանական և բուսական ծագման յուղերի, թաղիքի, սննդարդյունաբերության մնացորդների և անասնակերի, պարարտանյութի, մսից ենթամթերքի, բուսական նյութերի, քիմիական թելերի, ժամացույցների, ներկերի, տրիկոտաժե հագուստի արտադրության ոլորտներում:

Սցենար 2. ՀՀ տնտեսությունում ներդրում իրականացնելով իրանցի գործարարները կարող են ակնկալել զգալի օգուտներ անգամ կարճաժամկետ հատվածում ձկան, կաթի և կաթնամթերքի, կենդանի ծառերի, համեմունքների, ոգելից և ոչ ոգելից խմիչքների, աղի, դեղագործական մթերքների, պլաստմասսայի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների, իսկ միջնաժամկետում և երկարաժամկետում՝ մսից և ձկից մթերքների, օճառի, բուսական նյութերի, քիմիական թելերի, գործվածքների և ժամացույցների արտադրության ոլորտներում:

Ամփոփելով ատենախոսությունում կատարված վերլուծությունը՝ հեղինակը հանգել է հետևյալ **եզրակացություններին և առաջարկություններին**.

- Ժամանակակից գլոբալացման պայմաններում համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու տեմպերը նկատելիորեն արագացել են: Դա պայմանավորված է հիմնականում երկրների վարած առևտրային և ներդրումային քաղաքականությունների ազատականացման գործընթացով:
- ՕՈԻՆ–ի տեսության դրույթների և եզրակացությունների ուսումնասիրության հիման վրա հաշվի առնելով յուրաքանչյուր տնտեսության առանձնահատկությունները, հնարավոր է որոշել ՕՈԻՆ–ի տեսությունների կիրառելիությունը զարգացման տարբեր աստիճան ունեցող երկրների տնտեսության համար:
- Դիտարկելով ՕՈԻՆ գլոբալ միտումները՝ կարելի է առանձնացնել հետևյալ փուլերը. 1. ՕՈԻՆ հոսքերը հատկապես արագ են աճել 1990-ական թվականներից սկսած, 2. 2001թ. օտարերկրյա ներդրումների ներհոսքի և արտահոսքի ծավալները 2000թ. համեմատ կրճատվել են 50%-ից ավել,

3.2007թ. ՕՈՒՆ-ները հասան իրենց գագաթնակետին, որից հետո կտրուկ անկում նկատվեց, 4. 2013թ. օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքը զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում արձանագրել է նոր ռեկորդային մակարդակ:

- Իրանի ՕՈՒՆ դաշտը համակարգող առաջին օրենքն ընդունվել է 1965թ.' հետագայում մշտապես բարելավվելով: Վերջին մեծածավալ օրենսդրական բարեփոխումներն ԻԻՀ-ում իրականացվեցին 2002թ., երբ ընդունվեց ՕՈՒՆ ներգրավման և պաշտպանության մասին օրենքը: ԻԻՀ հիմնական ՕՈՒՆ ներհոսք ապահովող երկրները Գերմանիան, Նիդերլանդները և Կանադան են, իսկ ներդրումների ներհոսք գրանցող հիմնական ոլորտները՝ հեռահաղորդակցությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, քիմիական արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը:
- ՀՀ ներդրումային դաշտի հիմքը դրվեց 1995թ. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: Այնուհետև ընդունվեցին ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված այլ օրենքներ և իրավական ակտեր:
- Ամենամեծ ներդրումային հոսքեր ապահովող ոլորտները ՀՀ-ում 2015թ. հեռահաղորդակցությունը, էլեկտրականությունն ու գազն են, իսկ ամենախոշոր ներդրող երկրները՝ ՌԴ-ն և Ֆրանսիան: ԻԻՀ կողմից ՕՈՒՆ ներհոսքը կազմել է ՀՀ ՕՈՒՆ ընդհանուր ներհոսքի 0.1%-ը: Ավելին՝ ՀՀ-ում ԻԻՀ կողմից կատարված ներդրումները հիմնականում ունեն պատահական բնույթ և չեն ենթարկվում որևէ օրինաչափության:
- Այնուամենայնիվ, դիտարկելով 2002-2014թթ. ՕՈՒՆ ոլորտային բաշխվածությունը՝ կարող ենք փաստել, որ ՀՀ տնտեսության առանձին ոլորտներում ԻԻՀ կողմից իրականացված ներդրումները զգալի են՝ 2002թ.' գյուղատնտեսության ոլորտում, 2004թ., 2006թ. և 2007թ.' քիմիական արդյունաբերության ոլորտում:
- Հաշվարկվել է նաև ԻԻՀ կողմից ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ նպաստման չափը ՀՀ ՀՆԱ-ի պոտենցիալ աճին՝ 2001-2015թթ.' եռամսյակային կտրվածքով: Արդյունքում ստացվել է, որ իրանական ներդրումները դիտարկվող ժամանակահատվածում միջին հաշվով նպաստել են ՀՀ ՀՆԱ-ի աճին 0.4 մլն դոլարով:
- Էկենոմետրիկ վերլուծության միջոցով պարզվել է ԻԻՀ տնտեսական աճի ներդրումային միջավայրը կարգավորող օրենքների ազդեցությունը ՕՈՒՆ ներգրավման վրա. ՀՆԱ աճի 1 միավոր փոփոխության արդյունքում ՕՈՒՆ աճը ԻԻ-ում փոփոխվում է 4.52 միավորով, իսկ ՀՀ-ում՝ 1.19 միավորով, ԻԻՀ ՕՈՒՆ ներգրավման վրա ամենաշատն ազդում են երեք եռամսյակ առաջ իրականացված օրենսդրական բարեփոխումները՝ մեծացնելով ՕՈՒՆ աճը՝ 1.75 միավորով, իսկ ՀՀ-ում՝ չորս եռամսյակ առաջ իրականացված բարեփոխումները՝ մեծացնելով ՕՈՒՆ աճը 0.94 միավորով:
- Իրականացված հարցումների և տարբեր ցուցանիշների վերլուծության արդյունքում բացահայտվել են իրանական ներդրումների ներգրավման տեսանկյունից ՀՀ ներդրումային դաշտում առկա թերությունները՝ առկա են խնդիրներ աշխատուժի, կապիտալի ներգրավման, բաշխման, արտաքին

շուկաներ դուրս գալու, օրենսդրական, «կազմակերպություն-պետություն» վարչական փոխշփման տեսանկյունից, բարձր է էլեկտրաէներգիայի սակագինը, ՕՈՒՆ ներգրավման երկարաժամկետ ռազմավարության բացակայություն:

- Նշյալ խնդիրների լուծման համար մեր կողմից առաջարկվել են համապատասխան լուծումներ. Համակարգային խնդիրների լուծում, տեղական և օտարերկրյա կազմակերպությունների միջև ծագած վեճերի լուծման առանձին մարմնի ստեղծում, ՕՈՒՆ ներգրավման ՌԾ մշակում:
- Բացահայտ համեմատական առավելության և ներուժային համեմատական առավելության սկզբունքի հիման վրա հաշվարկվել են այն ոլորտները, որոնցում իրանցի գործարարների կատարած ներդրումները կստեղծեն ավելի մեծ արդյունք: Համաձայն մեր կողմից իրականացված հաշվարկների՝ այդ ոլորտներն են՝ բանջարեղենի, մրգերի, բանջարեղենի վերամշակումից մթերքի, մսից, ձկնից մթերքների, ծխախոտի և քարից, գիպսից, ցեմենտից իրերի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների, բուսական նյութերի, հանքաքարի, սոսնձի, գորգերի, ասեղնագործ կտորների, տրիկոտաժե պաստառների, կոշիկի, կերամիկական և ապակե իրերի, օճառի, կենդանական և բուսական ծագման յուղերի, թաղիքի, սննդարդյունաբերության մնացորդների և անասնակերի, պարարտանյութի, մսից ենթամթերքի, բուսական նյութերի, քիմիական թելերի, ժամացույցների, ներկերի, տրիկոտաժե հագուստի արտադրության ոլորտները:
- Իրանցի գործարարների շրջանում իրականացված հարցման արդյունքում բացահայտվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար առաջարկվել են տարբեր միջոցառումներ: Մասնավորապես՝ Իրանցի գործարարների՝ ՀՀ-ում գործունեություն ծավալելու տեսանկյունից տեղական արտադրողների հետ առաջացող վեճերի կարգավորման նպատակով անհրաժեշտ է ստեղծել առանձին մարմին, որը կգրառվի բացառապես օտարերկրյա ներդրողների և տեղական ներդրողների միջև ծագող վեճերի քննմամբ և խորհրդատվությամբ: Այս մարմինն, ի դեպ, կարող է լինել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին կից:
- ՀՀ-ում ՕՈՒՆ ներգրավման երկարաժամկետ ռազմավարական ծրագրի բացակայությունը անհապաղ լուծում պահանջող խնդիրներից է: Վերջերս ՀՀ նախարարությունների շրջանում իրականացվող կառուցվածքային փոփոխությունները վկայում են այն մասին, որ ՀՀ տնտեսությունում մեծ շեշտադրում է ստանում ներդրումային գործիքը: Դրա մասին է վկայում էկոնոմիկայի նախարարության վերանվանումը՝ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության: Սակայն ըստ հեղինակի սա անհրաժեշտ, բայց դեռևս ոչ բավարար քայլ է ներդրումների աճի, իսկ առավել ևս օտարերկրյա ներդրումների աճի տեսանկյունից: Նախ և առաջ մշակվելիք ՌԾ-ում հստակորեն պետք է տարանջատվեն ՀՀ տնտեսության համար ռազմավարական հայտարարվող ոլորտները միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Այնուհետև ՌԾ-ն պետք է որոշակի

մեթոդաբանության հիման վրա հստակ հաշվարկներով ներկայացնի ՀՀ տնտեսության ներդրումների տեսանկյունից նպաստավոր ոլորտները և այլն:

Ամփոփելով աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ թեպետ ՀՀ ներդրումային դաշտում առկա են մի շարք խոչընդոտներ, իրանական ներդրումների մեծածավալ ներգրավում ապահովելու համար, այդուհանդերձ այդ խոչընդոտների հաղթահարման համար երկար ժամանակ չի պահանջվի, առավել ևս՝ դրանց նախնական տարբերակը ներկայացված է հեղինակի կողմից իրականացված ատենախոսական հետազոտության շրջանակներում: Ըստ հեղինակի, ԵՏՄ մոտքի հնարավորությունն մոտ ապագայում առավել կգրավի իրանցի ներդրողներին ՀՀ-ում ներդրումներ իրականացնել և հայ-իրանական ներդրումային համագործակցությունը տեղափոխել որակական նոր հարթություն:

Ատենախոսությունում ստացված արդյունքները ամփոփված են հեղինակի կողմից հրատարակված 6 հոդվածներում.

1. Mohsen Heidari, «The impact of foreign direct investment on trade flows in Europe and the Republic of Armenia» // «Այլընտրանք» գիտական հանդես, #2, ապրիլ-հունիս, 2016, էջ 397-409:
2. Մոհսեն Հեյդարի, «Կապիտալի միջազգային շարժի և ՕՌԽՆ տեսական հիմնադրույթները և գործնականում դրանց կիրառման հնարավորությունները» // «Այլընտրանք» գիտական հանդես, #2, ապրիլ-հունիս, 2016, էջ 410-417:
3. Մոհսեն Հեյդարի, «Իրանի Իսլամական Հանրապետության ՕՌԽՆ վերլուծությունը» // «Այլընտրանք» գիտական հանդես, #3, 2016, հուլիս – սեպտեմբեր, էջ 233-237:
4. Մոհսեն Հեյդարի, «Հայ-իրանական ներդրումային համագործակցությունը» // «Այլընտրանք» գիտական հանդես, #4, 2016, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 297-304:
5. Mohsen Heydari, «Foreign direct investment and regional economics» // The IIOAB Journal (Institute of Integrative Omies and Applied Biotechnology), Vol. 7, oct. 2016, pp. 120-125.
6. Mohsen Heydari, «The impact of foreign direct investment on trade flows in the European Union and Armenia» // International Journal of Humanities and Cultural Studies, Special Issue. January 2016, pp. 2146-2159.
7. Մոհսեն Հեյդարի, «Իրանական ՕՌԽՆ ներգրավման համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում» // «Այլընտրանք» գիտական հանդես, #2, 2017, ապրիլ-հունիս, էջ 102-107:

8. Մոհսեն Հեյդարի, «Արտասահմանյան ուղղակի ներդրումները ասիական զարգացող երկրներում», «Այլընտրանք» գիտական հանդես, #3, 2017, հուլիս-սեպտեմբեր, էջ 183-190:

**ПЕРСПЕКТИВЫ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ,
ОСУЩЕСТВЛЯЕМЫХ ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКОЙ ИРАН В АРМЕНИИ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 – «Международная экономика».

Защита диссертации состоится 05-ого июня 2018 года, в 15³⁰, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике при Российско-Армянском университета по адресу: 0051, г. Ереван ул. Овсепя Эмина 123.

РЕЗЮМЕ

Экономические отношения между Арменией и Ираном начали развиваться с момента установления независимости Армении. Исламская Республика Иран (ИРИ) является одной из первых стран, которая признала независимость Армении и начала развивать с ней экономические и дипломатические отношения.

Однако ситуация с инвестициями между двумя странами далеко не обнадеживающая. В частности, как показал проведенный анализ прямых иностранных инвестиций (ПИИ) из ИРИ в Армению, они носят произвольный характер и не имеют четко выраженной закономерности и динамики. Более того, иранские инвестиции занимают небольшую долю в общем объеме притока ПИИ в Армению. Это объясняется наличием небольшого потребительского рынка РА, что снижает привлекательность страны для иранских инвесторов.

В 1995 г. для координации сферы инвестиций в Армении был принят «Закон об иностранных инвестициях». Затем были приняты и другие законы и нормативные акты с целью улучшения инвестиционного климата, а первый фундаментальный закон о защите инвестиций в ИРИ был принят в 1965 году. В дальнейшем этот закон преобразовывался и совершенствовался до 2015 года. С 1 января 2015 года РА и ИРИ оказались в новой экономической реальности: Армения присоединилась к Евразийскому экономическому союзу, таким образом, открывая перед инвесторами возможность выхода на рынок с большим потребительским потенциалом. Кроме того, в 2015 году постепенно начали смягчаться санкции против Ирана, и тем самым были созданы новые возможности для экономического развития. В этих условиях открываются новые возможности и горизонты для роста объемов армяно-иранских взаимных инвестиций.

Целью представляемой к рассмотрению работы является анализ состояния иранских ПИИ в Армении, выявление негативных факторов, препятствующих их привлечению, и

разработка основе полученных результатов предложений для дальнейшего увеличения объема иранских ПИИ в Армению.

Для достижения поставленной цели в исследовании были поставлены и решены следующие *задачи*:

- Проанализировать текущие тенденции инвестиционных процессов между РА и ИРИ и оценить влияние законодательной среды на привлечение ПИИ в Армении и в Иране;
- Проанализировать структуру и динамику армяно-иранских инвестиций;
- Осуществить SWOT-анализ инвестиционной среды Армении с точки зрения привлечении иранских инвестиций;
- На основе анализа данных социологического опроса, проведенного среди владельцев иранских компаний в Армении, определить основные проблемы, с которыми сталкиваются иранские компании, работающие на армянском рынке.
- Выявить наиболее благоприятные для привлечения иранских инвестиций сферы экономики Армении;
- Разработать и предложить перспективные направления инвестиционного сотрудничества между Арменией и Ираном.

К основным результатам исследования, содержащим *научную новизну*, можно отнести следующие:

- ✓ На основе регрессионного анализа показано влияние совершенствования законодательства в сфере иностранных инвестиций на привлечение ПИИ в РА и ИРИ, и выявлено, что проведение законодательных реформ быстрее влияет на привлечение ПИИ в ИРИ, чем в РА.
- ✓ На основе индекса «выявленных сравнительных преимуществ», предложенного Б.Балассой, а также индекса «потенциальных сравнительных преимуществ», предложенного Хаусманом и Клингером, выявлены приоритетные секторы экономики РА с точки зрения привлечения иранских ПИИ в краткосрочном и долгосрочном периодах.
- ✓ На основе социологического опроса, проведенного в десяти процентах 3492 иранских компаний, функционирующих в РА, а также сравнительного анализа инвестиционной среды в РА и ИРИ, предложены организационные меры для увеличения объемов иранских инвестиций в РА.

Результаты проведенного исследования могут быть применены в разработках дальнейших программ экономического сотрудничества между РА и ИРИ.

**PROSPECTS OF DIRECT FOREIGN INVESTMENTS MADE FROM THE ISLAMIC
REPUBLIC OF IRAN IN ARMENIA**

The abstract of the thesis for obtaining the degree of Doctor of Economics in the speciality 08.00.06 – «International Economics».

The defence of the thesis will take place on 05th of June, 2017 at 15³⁰ o'clock, at 008 Council of Economics of the SCC RA at Russian-Armenian University: 123 Hovsep Emin str., Yerevan, 0051.

ABSTRACT

The Armenian-Iranian economic relations have been established from the first days of Armenian independence. Islamic Republic of Iran (IRI) was one of the first countries, which recognized the independence of RA and began to develop diplomatic and economic relations. Nevertheless, the current statistical data about Armenian-Iranian investments are not encouraging. First of all in IRI there is no any official statistics about investments from RA, which means, that either they are not available or they are realised under the names of Iranians or Armenians in Iran to avoid many problems. The statistics of foreign direct investments from Iran in Armenia are showing, that these investments had occasional character, they don't have any tendency and have a small share in total FDI in Armenian economy. All this shows, that RA is not attractive for Iranian investors because of the small consumer market.

The base law of foreign investments in RA was accepted in 1995. Then for improving the investment climate in RA other laws and legal acts were accepted.

This situation was available before 2015. From 1st of January 2015 Armenia and Iran are in the new economic situation: the RA has become a member of the Eurasian Economic Union and has opened for investors the doors of 180 million potential consumer market. Also in 2015 the sanctions against Iran have gradually reduced, thus creating new opportunities for economic development.

Based on this, for the development of armenian-iranian mutual investments new horizons are opened. That is why there is necessity to the deep and comprehensive analysis of armenian-iranian investments.

The objective of the thesis is to analyze the situation of Iranian FDI in Armenia, to identify the obstacles to their involvement and to offer opportunities and ways for further expansion of Iranian FDI.

To achieve this goal, the following **tasks** were set:

- To discuss the current trends of FDI between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran and assess the influence of the legislative environment on attracting FDI in Armenia and Iran;
- To analyze the structure and dynamics of Armenian-Iranian investments;
- To conduct a SWOT-analysis of Armenia's investment environment in terms of attracting Iranian investments;
- To identify the main problems faced by Iranian companies operating in the Armenian market, based on their sociological survey;
- To identify the most favorable areas of Armenian economy for attracting Iranian investments and to develop and to offer perspective directions for investment cooperation between Armenia and Iran.

The scientific novelty and main results of the dissertation thesis. The main results and concepts supporting the scientific novelty of the dissertation are the following:

- ✓ On the basis of the regression analysis, the effect of the improvement of the legislation relating to foreign investment on attracting investments in the Republic of Armenia and the Islamic Republic of Iran was shown and it was revealed that the improvement of the legislation more quickly influences the attraction of FDI in the IRI than in the RA.
- ✓ Based on the index of the «revealed comparative advantages» proposed by Balassa, as well as the «potential comparative advantages» proposed by Hausman and Klinger, the primary sectors of the RA economy were justified and proposed for attracting Iranian FDI for the short and long term.
- ✓ Based on a sociological survey conducted in 10% of the 3,492 Iranian companies operating in Armenia, as well as a comparative analysis of the investment environment of the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, is proposed to conduct economic and organizational measures to increase the Iranian investments in Armenia.

The results of the dissertation thesis can be used in designing the future economic development strategies and policies in RA and IRI.